


03.05.2013

ԿՐՈՅՉ
Դ. Արք. Փակուլտետի աշխատավորության համար
2-րդ օկտոբեր
ՏԱՐԻՆԻ

00 AUG 2010



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. Վ. ՐԱԶԵԱՆ

Ե. ՏԱՐԻ, Թիֆ 1

1937

ՑՈՒՆԻԱՐ - ՄԱՐՏ

ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՇԵՄՔԻՆ

«ՎԵՄ»-ի առաջին գիրքը լոյս տեսաւ 1933 թ. հեկտեմբերին, առ է, ներկայ համարով վերջանում է նրա բաժանորդագրութեան երրորդ շրջանը - երեք վեցեակ, 18 գիրք - եւ բաշւում է բաժանորդագրութեան չորրորդ շրջանը նոր վեց գրքի համար: Այս առթիւթոյլ ենք տալիս մեզ անել մի քանի խորհրդածութիւններ, որոնք, կարծում ենք, կիրառելի են նաեւ արտասահմանի մեր ողջ մամուլի նկատմամբ:

Պէտք է խոստովանենք, որ հեշտ չէր մեր անցած ճամբան: Յայտնի է արդէն, որ վարդ ու չուշաններ չեն ցանւած հայ գրականութեան ճանապարհին, եւ, բնականաբար, «ՎԵՄ»-ն էլ գերծ չեղաւ հայ մամուլին վերապահւած բարոյական, բայց, մանաւանդ, նիւթական գլւարութիւններից: Եթէ ընթերցողները չեն մոռացել, մեր առաջին խմբագրականը վերջանում էր հետեւեալ խօսքերով! -

«Մենք չենք քաշւում ասելու, որ «ՎԵՄ»-ի նիւթական ապահովութիւնը ամբողջապէս կախւած է ընթերցող հասարակութեան ցոյց տալիք հետաքրքրութեան, համակրանքի եւ աջակցութեան աստիճանից: «ՎԵՄ»-ը զուտ դադարակարական ձեռնարկ է, նրա թիկունքում անհատ կամ կաղմակերպւած յենարաններ չկան: «ՎԵՄ»-ի միակ յենարանն իր հաւատոն է դէպի սկսած գործի կարեւորութիւնը: Իսկ յայտնի է, որ հաւատով լեռներ կարելի է շարժել տեղից » :

Ինչ վերաբերում է բարոյական կողմին, պայմանները, համեմատարար, աւելի նպաստաւոր էին: Իր գոյութեան հէնց առաջին օրից սկսած «ՎԵՄ»-ը վայելեց մեր որակեալ մտաւորականութիւնից շատերի անկեղծ համակրանքն ու աշխատակցութիւնը, առանց դոյզն իսկ նիւթական ակնկալութեան: Հաճոյքով եւ երախտագիտութեամբ արձանագրելով այս փաստը՝ մենք հաւատացած ենք, որ վերաբերու-

3/89

513-2001


A.R.A.R.®

մը նոյնը կը լինի եւ ապագայում, որովհետեւ «ՎԵՄ»-ը հիւրընկալ ասպարէզ է, առանց դիրքի ու դաւանանքի խտրութեան, հայ դրչե բոլոր մշակների համար, որոնք անշահախնդիր սիրով նւիրւած են եւ կամենում են ծառայել հայ մշակոյթին եւ հայ անցեալի ուսումնասիրութեան դործին:

Նոյնը, դժբախտաբար, չենք կարող ասել նիւթական պայմանների մասին: Եւ այս տեսակէտից արդէն սին պատրանքներ չունէինք բնաւ, երբ ձեռնարկում էինք «ՎԵՄ»-ի հրատարակութեան: Մեղ շատ դժւարութիւններ պատճառեցին եւ շարունակում են պատճառել անպարտածանաչ բաժանորդները, մինչդեռ «ՎԵՄ»-ի գոյութեան միակ հիմքը բաժանորդագրութիւնն է: Եթէ բոլոր բաժանորդները ժամանակին ու կանոնաւոր կերպով վճարեն իրենց բաժնեգինը, «ՎԵՄ»-ը բոլորովին ազատ կը լինի նիւթական հոգսերից, որովհետեւ բաժանորդների թիւը միանդամայն բաւական է տպագրական եւ թղթատարական ծախսերը հոգալու համար: Այս «եթէ»-ն է, դժբախտաբար, որ գոյութիւն չունի: Եւ այս մասին ստիպւած ենք քանի մը խօսք ասել, ա՛յն յոյսով, որ սա կը լինի մեր առաջին եւ վերջին խօսքը այս ուղղութեամբ:

Զարմանալի բան. հայ մարդը, որ գործնական կեանքի բոլոր ասպարէններում, ճանաչւած է իրեւ պարտածանաչ վճարող եւ ուրիշի սեփականութիւնը յարգող, հայերէն դրքի ու թերթի համար դրամ վճարել չի սիրում եւ հայ հրատարակչից ու խմբագրից իւրացրած դրամը գողութիւն չի համարում: Հայ մարդը ամէն բանի համար դրամ չի խնայի, բայց երբ հերթը հայ դրքին ու թերթին դայ, հազար տեսակ հնարամտութեան կը դիմէ, պարտականութիւնից խուսափելու համար: Հայ հրատարակչի ու խմբագրի դրամը իւրացներ, կարծես, բնական եւ արդար է համարում: Մարդիկ կան, որ բաժանորդ են դրւում, ստանում ու թերեւս նաեւ, կարդում էի են. որ եւ է հրատարակութիւն, բայց երբ նրանց բաժնեգինը վճարեւու յիշեցում է յինում, նոյն իսկ նեղանում են. «Ղա՛մ», Հո չկերա՞նք ձեր դրամը, կր վճարենք»... Բայց չեն վճարում եւ անհամրեր սպասում են, որ նիւթական դժւարութիւններին չտոկիալով՝ հրատարակութիւնը խափանվի ու իրենք էլ ուտեն հրատարակչի դրամը: Մենք յոյս ունենք, որ այդ տեսակ անբարեխիղ մարդկանց հաճոյք պատճառելու միջակի մէջ չենք ընկնի, բայց երեւոյթը չենք կարող չարձանագրել դառն վշտով:

Առդարութիւնը պահանջում է ասել նաեւ, որ այս կարդի անբարեխիղ բաժանորդների մեծ մասը դուրս է պահիս մտաւորականնե-



րի շարքերից։ Հայ գիրքն ու մամուլը ամենից քիչ գուրգուրանք ու նիւթական քաջալերութիւն գտնում է հայ մտաւորականի կողմից։ Մի՛ զարմանաք՝ հայ մտաւորականի Բացառութիւններ, անշուշտ, քիչ չեն, բայց ընդհանուր երեւոյթը այն է, որ հայ մտաւորականը իրեն համար անպատճեթիւն է համարում հայերէն հրատարակութեան համար դրամ վճարելը։ Ընդհակառակը, նա սպասում է, որ հայ հրատարակիչը կամ հայ հեղինակը իրեն նւէր ուղարկէ իր գործերից, որպէսզի նա պատիւ անէ կարգալու։ Հարցրէք հայ գրավաճառերից ու հրատարակիչներից, և կը տեսնէք, որ մեր մեղադրանքը անտեղի չէ։ Մինչդեռ ճիշտ հակառակը պէտք է սպասէինք։ Հայ մտաւորականը պէտք է լինէր, առաջին հերթին, հայերէն գիրքն ու մամուլը քաջալերողը։ Հայ մտաւորականը իր ընթացքով օրինակ պէտք է ծառայէր ուրիշների համար։ Երբ նա ինքը ձրիակեր է հայերէն ընթերցանութեան դորժում, բարոյական ի՞նչ իրաւունքով պէտի պահանջէ, որ շարքային ընթերցողը աւելի լաւ վերաբերում ունենայ դէպի հայ մտաւորականի մտքի արտադրութիւնները։

Հայ հարստի մասին մենք խօսեն իսկ աւելորդ ենք համարում։ Վերջին հաշով, հայ գիրքն ու մամուլը պահողը, նրանց նիւթական միջոց հայթայթողն էլ, այսպէս կոչւած, «հասարակ ժողովուրդն» է՝ հայ աշխատաւորը՝ արհեստաւորը, բանտորը, առեւտրականը, նա, որ քրտինքով է ապրում եւ յարգանք ունի դէպի ուրիշի աշխատանքը։ «Վեմ»-ի շուրջ 700 վճարող բաժանորդների շարքում մատի վրա են հաշուում մտաւորականներն ու հարուստները — բոլորը գրեթէ աշխատաւոր մարդիկ են։ Սրանց անվերապահ քաջալերանքով է ապրել «Վեմ»-ը մինչեւ այժմ։ Սրանց վրա է մեր յոյսը եւ ապագայում։

Զինւած մեր բարեկամ – աշխատակիցների եւ պարտաճանաչ բաժանորդների ու գործականների քաջալերանքով ու գործօն աջակցութեամբ՝ մենք կը շարունակենք մեր գործը, առանց վարանումի։ Առանց կեղծ համեստութեան, մենք խստովանում ենք, որ «Վեմ»-ի 18 գորերը, թէկուղ համեստ, բայց շօշափելի նպաստ են Հայ Մշակոյթին։ Մեր ջանքն է լինելու աւելի ճոխ ու շօշափելի դարձնել այդ նպաստը։

Նորից ու նորից յիշեցնում ենք մեր բոյոր բարեկամներին և բաժանորդներին։ «Վեմ»-ը գուտ գաղափարական ձեռնարկ է, երա թիկունքում անհատ կամ կազմակերպւած յենարաններ չկան։ «Վեմ»ի միակ յենարանը իր հաւատն է դէպի կատարած գործի կարեւորութիւնը։